

Հարց

Ի՞նչ գործառույթներ է պարտավոր կատարել մատակարարը գազամատակարարման ընթացքում:

Պատասխան

Մատակարարը պարտավոր է իրականացնել բաժանորդի գազամատակարարումը՝ ԳՄՕԿ-ով և Պայմանագրով սահմանված պայմաններով: Գազամատակարարման ընթացքում մատակարարը պարտավոր է կատարել հետևյալ գործառույթները.

- ա) գազամատակարարում,
- բ) վճարման փաստաթղթերի կազմում և ներկայացում,
- գ) բաժանորդի ահազանգով գազամատակարարման ընդհատում, դադարեցում, վերսկսում,
- դ) բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների պարբերական հրահանգավորում ըստ ժամանակացույցի՝ գազասպառման համակարգի և սարքերի անվտանգ օգտագործման վերաբերյալ,
- ե) սեզոնային գազամատակարարման դեպքում մատակարարման դադարեցում և վերսկսում բաժանորդի դիմումի համաձայն,
- զ) կենցաղային սպառում ունեցող բաժանորդների գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների վերաբերյալ պայմանագրերի և դրանց կատարման պարբերական ստուգում,
- է) բնակիչների և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի նկատմամբ հսկողություն իր կողմից կամ հանձնարարությամբ՝ սպասարկող կազմակերպությունների միջոցով: